VEOLIA

Ջուր

«22» օգոստոս 2023թ.

N ՀՄ/28960

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝
պրն. Գ.Բաղրամյանին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
№ 6028 22 08 2023թ.

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Բաղրամյան

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ–ի դեկտեմբերի 9-ի <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին>> N 397Ա որոշմամբ հաստատված Լիցենզիայի պայմանների N 3 հավելվածի, հաշվարկվել են <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության կողմից սպասարկվող տարածքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագները:

Կից ներկայացված հաշվարկի արդյունքում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման սակագների գումարային մեծությունը կազմում է 206.446 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ-ն), որի տարբերությունը 2023թ. գործող սակագնի նկատմամբ կազմում է 0.48%:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 09.12.2016թ. №397Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների №3 հավելվածի 13-րդ կետի համաձայն, եթե որևէ հաշվարկային տարվա համար հաշվարկված մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի և գործող գումարային սակագնի տարբերությունը չի գերազանցում 0.5%-ը, ապա տվյալ հաշվարկային տարվա համար վերահաստատվում են ծառայությունների մատուցման գործող սակագները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով՝ լիցենզիայի պայմանների հիշյալ կարգավորումը՝ գործող և ճշգրտված գումարային մանրածախ սակագների ոչ էական տարբերությունը՝ խնդրում ենք 2024թ. համար սակագները թողնել անփոփոխ պահպանելով 2023թ. գործող սակագները՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին (բաժանորդներին)՝

ա. խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ 127,5 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց, առանց ավելացված արժեքի հարկի, և 153,0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը՝ 22,5 դրամ՝ հեռացված յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց, առանց ավելացված արժեքի հարկի, և 27,0 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

ՀՀ, ք. Երևան,375025,Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: am.water.office.all@veolia.com
Web site: www.veolia.am

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼՔ 28960
«22» 08 2023

2) սույն կետի 1-ին ենթակետում չնշված մյուս բաժանորդներին՝

ա. խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ 147,63 դրամ՝ մատակարարված յուրաքանչյուր խորանարդ մետր խմելու ջրի դիմաց, առանց ավելացված արժեքի հարկի, և 177,156 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

բ. ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը՝ 26,0525 դրամ՝ հեռացված յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց, առանց ավելացված արժեքի հարկի, և 31,263 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին՝

ա) խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 34,575դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր մատակարարված խմելու ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 41,490 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

բ) ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ 17,2875 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի և 20,745դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը :

4. <<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագինը՝ 10,169 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց՝ առանց ավելացված արժեքի հարկի, և 12,2028 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Խնդրում ենք նախկին (Վեոլիա Ջուր ՓԲԸ–ի 07.08.2023թ. N ՄՇ/26632) Հայտով ներկայացված փաստաթղթերն ընդունել, որպես սույն դիմումի հիմնավորումներ, բացառությամբ <<Առավոտ>> օրաթերթում հրապարակված հայտարարությունը, որի փոխարեն կից ներկայացնում ենք <<Փաստ>> հասարակական-քաղաքական օրաթերթում հրապարակված հայտարարությունը 2-ական օրինակներից:

ՀՀ, ք. Երևան, Աբովյան 66
Հեռախոս՝ **011 30-01-85**
Էլեկտրոնային փոստ՝ am.water.office.all@veolia.com
ՀՎՀՀ՝ 02655115, Պետ.ռեգիստրի գրանցման թիվ՝ 273.120.934743, 16.11.2016թ. վկայական՝ N 03Ա1084743
Հ/Հ Հայբիզնեսբանկ ՓԲԸ՝ 11500351562015

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ
Գլխավոր տնօրենի՝ Մարիաննա Շահինյան

22 օգոստոս 2023թ.